Տեղեկանք

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Դանիայի Թագավորության կառավարության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին» համաձայնագրի ստորագրման նպատակահարմարության վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Դանիայի Թագավորության կառավարության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին» համաձայնագրի /Համաձայնագիր/ կնքման համար հիմք է հանդիսանում 2012թ. դեկտեմբերի 17-ին ստորագրված և 2014թ. հունվարի 1-ից գործող «Հայաստանի Հանրապետության և Եվրոպայի Միության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին» համաձայնագիրը և վերջինիս կից՝ Դանիայի Թագավորության համատեղ հայտարարությունը, որով կոչ է արվում, որ Հայաստանի Հանրապետությունը և Դանիայի Թագավորությունը կնքեն կարճաժամկետ վիզաների տրամադրումը դյուրացնելու վերաբերյալ երկկողմ համաձայնագիր՝ Համաձայնագրի պայմաններին համապատասխան:

Համաձայնագրի կնքումը մեծապես կնպաստի Հայաստանի Հանրապետության և Դանիայի Թագավորության միջև տնտեսական, հումանիտար, մշակութային, գիտական և այլ կապերի խորացմանը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին մուտքի արտոնագրերի տրամադրումը պարզեցնելու միջոցով:

Համաձայնագրի կնքումը համահունչ է Հայաստանի Հանրապետության և Դանիայի Թագավորության միջև բարեկամական և գործընկերային հարաբերություններին և բարենպաստ ազդեցություն կունենա երկու պետությունների քաղաքացիների փոխայցելությունների աճի վրա:

2013 թվականի հունվարի 10-ից Եվրոպական Միության բոլոր քաղաքացիներն ՀՀ այցելելիս ազատվել են վիզայի պահանջից մինչև 90 օր ժամկետով: Համաձայնագրի կնքումը կնպաստի Եվրոպական Միության անդամ պետություններին համանման ռեժիմի անցնելուն:

Ելնելով վերոգրյալից՝ արտաքին գործերի նախարարությունը նպատակահարմար է գտնում Համաձայնագրի կնքումը:

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՇԱՎԱՐՇ ՔՈՉԱՐՅԱՆ